ԵՎՐԱՍԻԱ
ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅՈՒՆ
ՀԻՄՆԱԴՐԱՄ

Հակակոռուպցիոն համաժողով
15 դեկտեմբեր, 2008թ.
Երևան, Հայաստան

Զեկույց

2008թ. դեկտեմբերի 15ին տեղի ունեցավ «Լրատվամիջոցների, հասարակական կազմակերպությունների և պետական կառավարման մարմինների դերը կոռուպցիայի դեմ պայքարում» ծրագրի եզրափակիչ համաժողովը, որի նպատակն էր մեկտեղ բերել ծրագրի բոլոր մասնակիցներին և շահագրգիռ կողմերին՝ ծրագրի իրականացման ընթացքում ձեռքբերված արդյունքների և քաղած դասերի շուրջ ամփոփիչ բանավեճ անցկացնելու համար:

Համաժողովին եկել էին հարյուրից ավելի մասնակիցներ՝ դիվանագիտական առաքելությունների ներկայացուցիչներ, միջազգային և դոնոր կազմակերպություններ, պետական գործակալություններ, ՁԼՄ-ներ և քաղաքացիական հասարակության կազմակերպություններ:

Դեռևս 2006թ. Եվրասիա Հիմնադրամի կազմակերպած Միջազգային հակակոռուպցիոն համաժողովն ուրվագծել էր հանձնարարականների մի փունջ, ինչն էլ հետագայում կազմեց «Լրատվամիջոցների, հասարակական կազմակերպությունների և պետական կառավարման մարմինների դերը կոռուպցիայի դեմ պայքարում» ծրագիրը:

Ծրագրի իրականացման ընթացքում մի շարք հասարակական կազմակերպություններ և լրատվամիջոցներ դարձան գործընկերներ և շահագրգիռ կողմեր: Երեք հասարակական կազմակերպություններ Եվրասիա համագործակցություն հիմնադրամի աջակցության շնորհիվ իրականացրել են նախագծեր, որոնց նպատակն էր մեծացնել քաղաքացիական հասարակության վերահսկողությունը պետական կառավարման մարմինների գործունեության ու նրանց կողմից կատարվող ծախսերի նկատմամբ: Այս նախագծերի նպատակը քաղաքացիական ծառայության հավաքագրման և ատեստացիայի, ճանապարհային երթևեկության և տեղական կառավարման հսկողությունն էր: Բացի այդ, չորս լրատվամիջոցներ դրամաշնորհային աջակցություն են

> «Կոռուպցիան վատ մարդկանց կողմից վատ բաներ անելու խնդիր չէ: Այն չափազանց մարդկային խնդիր է՝ երբ մարդիկ համարում են, որ իրենց ամեն ինչ կարելի է, երբ նրանք այդ հնարավորությունն ունեն և համարում են, որ պաշտպանված են հետևանքներից: Կոռուպցիան ծանր և խրթին մարտահրավեր է, սակայն և հաղթահարելի՝ դրա դեմ պայքարելու մեր համատեղ ջանքերի դեպքում»:
>
> Մարի Լ. Յովանովիչ

ստացել հակակոռուպցիոն լուսաբանում իրականացնելու համար՝ տեղեկատվության խնդիրների և թափանցիկ կառավարման վերաբերյալ (տեղական ինքնակառավարման մակարդակով):

Ծրագրի բովանդակությանն ու շրջանակներին ծանոթացնելու նպատակով մասնակիցներին կանխավ բաժանվել էին տեղեկատվական փաթեթներ, որոնք ներառում էին նաև հաջողված պատմություններ իրականացված նախագծերից: Իր խոսքում նորին գերազանցություն դեսպան Մարի Լ. Յովանովիչը շնորհակալություն հայտնեց մասնակիցներին կոռուպցիայի դեմ պայքարին նվիրվածության համար և հիշեցրեց, որ այս հասարակական չարիքն առկա է բոլոր զարգացած հասարակություններում. տարբեր է միայն դրա դեմ պայքարող քաղաքացիների խիզախությունը: Հայաստանի Քաղաքացիական ծառայության խորհրդի նախագահ պարոն Մանվել Բաղալյանը խոսեց այն աշխատանքի մասին, որ կատարել են մի խումբ հասարակական կազմակերպություններ՝ իրականացնելով Քաղաքացիական ծառայության խորհրդի աշխատանքի մոնիտորինգը: Պրն. Բաղալյանն ընդգծեց պետական կառավարման մարմինների թափանցիկության և մասնակցային գործընթացի կարևորությունը և իր պատրաստակամությունը հայտնեց ապագայում ևս շարունակել արդեն հաստատված համագործակցությունը:

> «Մենք սկսել ենք համակարգի լուրջ բարեփոխումներ, որոնք դժվար է իրականացնել առանց համապատասխան միջազգային փորձի մանրակրկիտ ուսումնասիրության և լուրջ միջազգային փորձագիտության ներգրավման: Մենք հույս ունենք, որ մեր համագործակցությունը ԵՀՀ հետ միայն սկսվում է այս ծրագրով»:
> Մանվել Բաղալյան

Բացման նիստից հետո կազմվեցին վեց թեմատիկ աշխատանքային խմբեր: Յուրաքանչյուր աշխատանքային խումբ կազմված էր միջին հաշվով տաս մասնակցից, ում աշխատանքը համակարգում էր մեկ փորձագետ:

Առաջին խումբը կենտրոնացած էր «Կոռուպցիայի կանխումը համայնքային մակարդակում» հարցի վրա: Համակարգողը «Հետաքննող լրագրողներ» հասարակական կազմակերպության ծրագրի ղեկավար Սառա Պետրոսյանն էր: Խումբը քննարկեց, մի կողմից, այն դժվարությունները, որոնց բախվում են համայնքի անդամները, տեղական կառավարման միավորների (համայնքի ղեկավարներ, կադաստր, տեղական գրանցման գրասենյակներ և այլն) հետ առնչվելիս, մյուս կողմից՝ թե ինչպես վերացնել այդ դժվարությունները: Օրվա վերջին խումբը ներկայացրեց Հայաստանի Տեղական ինքնակառավարման մարմինների /ՏԻՄ/ բնագավառի հետ կապված մի շարք խնդիրներ:

Համաձայն խմբի եզրահանգման, ***համայնքի մակարդակով թափանցիկ և մասնակցային կառավարում ստեղծելու համար առաջիկա ծրագրերը պիտի կենտրոնանան ՏԻՄ-երի պետական գնումներին առնչվող գործառույթի վրա:*** Մասնավորապես, ***«Համայնքի սեփականության օտարման մասին» ՀՀ օրենքը և համապատասխան կարգավորումները պետք է հրապարակվեն ի գիտություն տեղական բնակչության, և ճշգրտումներ կատարվեն գործող օրենսդրության մեջ:*** Այս կերպ նաև կաճի տեղական պաշտոնյաների աշխատանքի հասարակական վերահսկողությունը: Բացի այդ, խումբն առաջարկում է նվազեցնել տեղական պաշտոնյաների արհեստականորեն ուռճացված թիվը բյուրոկրատիան բացառելու նպատակով: Միայն համայնքի բյուջեի պարզեցված (հասարակության համար հասկանալի

դարձված) հրապարակումն իսկ կավելացներ մասնակցայնությունն ու վստահությունը տեղական իշխանությունների աշխատանքի նկատմամբ:

Երկրորդ խումբը կենտրոնացած էր ««Տեղեկատվության ազատության մասին» ՀՀ օրենքի կիրառման խոչընդոտների» վրա: Համակարգողը Գյումրու ժուռնալիստների «Ասպարեզ» ակումբի նախագահ Լևոն Բարսեղյանն էր: Խումբը քննարկեց տեղեկատվության ազատության հակասությունը Հայաստանում. թեև օրենքը լայնորեն երաշխավորում է տեղեկատվության ազատությունը, սակայն դրա թերի ըմբռնումն ու անպատկան կիրառությունը բերում են այն բանին, որ պետական գործակալությունները հաճախ զրկում են քաղաքացիներին իրենց իրավունքից: Ներկայումս շատ կազմակերպություններ գործում են ողջ երկրում հասարակական ծառայության մարմիններում «մամլո քարտուղարի» ինստիտուտի ամրապնդման ուղղությամբ, ով պատասխանատվություն է կրում տեղեկատվության ազատության վերաբերյալ դիմումների և տեղեկատվության տարածման համար: Խմբի կողմից մատնանշված կարևոր խնդիրներից մեկը ***մի կողմից, երկրում բանիմաց և շահագրգիռ մամլո քարտուղարների պակասն է, մյուս կողմից, մարդկանց՝ իրենց իրավունքներին անտեղյակ լինելը***: Խումբն առաջարկեց համակողմանի ուսումնական նախաձեռնություն տեղեկատվության բնագավառի պաշտոնյաների համար և պահանջեց, որ վերջիններս ողջ երկրում կանոնավոր կերպով զեկույցներ թողարկեն իրենց գործունեության իրականացման մասին: ***Քաղաքացիական հասարակության կազմակերպությունները պետք է շարունակեն հատուկ ուշադրություն դարձնել «Տեղեկատվության ազատության մասին» ՀՀ օրենքի կենսագործման հսկողությանն առնչվող ռազմավարական դատավեճերին:*** «Տեղեկատվության ազատության մասին» ՀՀ օրենքի կիրառությունը խթանելուն և կենսագործելուն ուղղված գործողությունների շարքում պետք է լինեն հասարակական կազմակերպությունների կողմից պաշտոնյաների վրա տեղեկատվության պահանջների տարափը և Օրենքի կիրառության մոնիտորինգը համայնքների մակարդակով:

Երրոդ խմբի քննարկման նյութը «Դատաիրավական համակարգում կոռուպցիոն ռիսկերի նվազեցումն» էր: Համակարգողը «Հայաստանի երիտասարդ իրավաբանների ասոցիացիայի» ղեկավար Կարեն Զադոյանն էր: Միջազգային կազմակերպություններն ու դոնորները դատական համակարգում կոռուպցիայի նվազեցմանը նպաստող որոշակի նախագծեր են իրականացնում: Խումբը քննարկեց այն հարցը, թե ինչու, չնայած այս ջանքերին, այնուամենայնիվ, մնում են բազմաթիվ խնդիրներ և մատնանշեց խնդրի լուծմանն ուղղված նոր ռազմավարություններ: Ի տարբերություն մի շարք այլ ոլորտների, ինչպես՝ ճանապարհային ոստիկանությունը, քաղաքացիական ծառայությունը, սպառողների իրավունքներն ու տեղական իշխանությունները, արդարադատության ոլորտում դեռևս բացակայում է քաղաքացիական հասարակության ծանրակշիռ մասնակցայնությունը: Խումբն առաջարկեց ***ընդլայնել հասարակության «իրավագիտակցությունը»՝ մարդկանց ավելի լայնորեն տեղեկացնելով դատական որոշումների մասին, հրապարակելով մասնակցային գործընթացի հաջողված պատմություններն ու լավագույն գործելակերպերը:*** Նշվեց նաև, որ մարդկային ռեսուրսների ընտրությունը ևս կարևոր է Հայաստանում արդարադատության զարգացումն ապահովելու համար: Խումբն առաջարկեց ***էականորեն բարձրացնել արդարադատության ոլորտում վճռորոշ դիրքեր զբաղեցնող անձանց՝ դատավորների, աշխատավարձը, ինչպես նաև դատավորների ընտրության գործընթացը դարձնել թափանցիկ և դնել քաղաքացիական հասարակության աչալուրջ հսկողության տակ:***

Չորրորդ խումբը կոչվում էր «Կոռուպցիայի մշակույթը Հայաստանում» և կենտրոնացած էր Հայաստանում կոռուպցիա երևույթի ընդունված լինելու հանգամանքի վրա: Խումբը փորձեց պատասխանել այնպիսի հարցերի, ինչպես՝ «արդյո՞ք հայերը համակերպվել են կոռուպցիային, որպես իրենց ամենօրյա կյանքի մասը կազմող երևույթի»: Համակարգողը «Միջնաբերդ» հասարակական կազմակերպության ղեկավար Նունե Դիլանյանն էր: Խմբի եզրահանգումն այն էր, որ կոռուպցիան ընդհանուր առմամբ հասարակությանը բնորոշ ենթարկվելու հատկության և ապատիայի արդյունք է: Կոռուպցիայի ընկալումը երկրում հիմնված է բացասական փորձի վրա և հոռետեսական է: Հասարակությունը պիտի ավելի տեղյակ լինի երկրում գործող՝ բոլոր մակարդակներում կոռուպցիայի և օրինախախտումների դեպքերի համար նախատեսված բողոքի մեխանիզմների մասին: ***Պետք է իրականացվի լայնամասշտաբ խթանիչ տեղեկատվական արշավ՝ հակակոռուպցիոն պայքարի ոլորտում հաջողված պատմությունների և լավագույն գործելակերպի ներկայացմամբ***:

Զուգահեռաբար չորրորդ խմբի հարցադրումներին **հինգերորդ խումբը**, որ անվանված էր «Մարդու իրավունքները և կոռուպցիան», քննարկեց քաղաքացիների տեղեկացվածությունն իրենց իրավունքների մասին, և թե ինչպես կարող են մարդիկ հաջողությամբ պաշտպանել իրենց իրավունքները: Խումբը վարում էր Հելսինկյան քաղաքացիական ասամբլեայի Վանաձորի գրասենյակի ղեկավար Արթուր Սաքունցը: Խումբն արտահայտեց մտահոգություն, թե չկա մարդու իրավունքների հասարակական պահանջարկ, և որ հասարակությունը «կլանված» չէ մարդու իրավունքներով: Դրա բացատրությունն, ըստ մասնակիցների, ***որոշումներ կայացնելու պրոցեսին հասարակության անտեղյակ և անմասնակից լինելն է:*** Երկարաժամկետ մոնիտորինգը՝ մասնակցային մոտեցման հետ միասին, այս իրավիճակում առաջարկվեց որպես խնդրի հնարավոր լուծում: Խումբն ընդգծեց ***Օմբուդսմանի գրասենյակի կարևորությունը և առաջարկեց սերտ համագործակցություն ծավալել վերջինիս և հասարակական կազմակերպությունների միջև հասարակական բողոքի դիտարկման գործընթացում***: Հանրային լսումների և հասարակական կազմակերպությունների նախաձեռնած կլոր սեղանների հանդեպ ունեցած իր ողջ թերահավատությամբ հանդերձ, խումբը հանգեց այն եզրակացությանը, որ այդ միջոցներն այնուամենայնիվ կարող են հավելյալ նպաստ բերել հասարակական այլ քարոզարշավներին:

Վեցերորդ խումբը քննարկում էր «Քաղաքացիական հասարակության դերը կոռուպցիայի դեմ պայքարում»: Ղեկավարում էր Թրանսփարենսի Ինթերնեշնլ հակակոռուպցիոն կենտրոնի նախագահ Ամալյա Կոստանյանը: Խումբը ներկայացրեց քաղաքացիական հասարակության՝ կոռուպցիայի դեմ պայքարում հնարավոր դերին վերաբերող հանձնարարականների ցանկ: Ըստ խմբի, պետք է հասնել այն բանին, որ ժողովուրդն ավելի լավ հասկանա կայուն քաղաքացիական հասարակության կարևորությունը թափանցիկ կառավարման ապահովման գործընթացում: Այդ նպատակով պետք է կազմակերպել թեժ գծեր և հասարակական խորհրդակցություններ: Խումբն առաջարկեց մշտական կապ հաստատել քաղաքական կուսակցությունների հետ խորհրդարանի մակարդակով՝ քաղաքացիական հասարակության մեջ բարեփոխումներն առաջ մղելու նպատակով: Քաղաքացիական հասարակության կազմակերպությունները /ՔՀԿ/ կարող են նաև նպաստել թափանցիկ կառավարման և ՔՀԿ-ների մոնիտորինգի լավագույն միջազգային փորձի ներդրմանը: Նշվեց, որ ***պետական գնումների գործընթացը մեկն է այն խնդիրներից, որը պետք է լինի քաղաքացիական հասարակության ուշադրության կենտրոնում***: Խումբն իր մտահոգությունն արտահայտեց ՔՀԿ-ների միջև համագործակցության բացակայության առնչությամբ, նշելով, որ դա ավելի շուտ ներքին կոորդինացիայի խնդիր է, քան՝ արտաքին խոչընդոտների: Վերջապես, խումբը շեշտեց

հասարակական կազմակերպությունների մասնակցայնությանը զուգահեռ՝ ոչ ինստիտուցիոնալ հասարակական մասնակցայնության կարևորությունը կառավարության գործողությունների մոնիտորինգի գործընթացում:

Համաժողովը լուսաբանվեց մի շարք լրատվամիջոցների կողմից՝ Հայաստանի Հանրային հեռուստատեսություն, Հ2, Համայնապատկեր, Ա1+-, «Groong» և «Հետք» էլեկտրոնային կայքեր, «Արմինֆո» և «Նոյյան Տապան» նորությունների գործակալություններ և այլն: Բազմաթիվ հղումներ եղան ինչպես Մարի Յովանովիչի ելույթին, որը համեմված էր ամերիկյան իրականությունից բերված կոռուպցիային վերաբերող օրինակներով, այնպես և Ամալյա Կոստանյանի խոսքին: Լրագրողների ուշադրությանն արժանացավ նաև ծրագրի կողմից ներմուծված՝ լրատվամիջոցների, քաղքացիական հասարակության և կառավարության միջև եռակողմ համագործակցության հայեցակարգը:

Այսպիսով, Համաժողովի ընթացքում քննարկված հիմնախնդիրներն առավելապես վերաբերում էին հասարակության վստահության պակասին դատաիրավական և պետական կառավարման համակարգերի նկատմամբ, ինչպես նաև պետական կամքի անբավարարությանը պատժամիջոցների կիրառման կամ բարեփոխումների իրականացման հարցում: Առաջարկություններն հիմնականում ուղղված էին *հասարակության իրազեկության և դերի բարձրացմանը, մասնակցային և մոնիտորինգային գործընթացների ակտիվացմանը, ինչպես նաև քաղաքացիական հասարակական կազմակերպությունների, զանգվածային լրատվամիջոցների և պետական կառույցների միջև սերտ համագործակցության ամրապնդմանը, որի արդյունքում հնարավոր են ինստիտուցիոնալ փոփոխություններ և հաշվետվողականության բարձրացում մի շարք առանցքային ոլորտներում:*

Հետագայում ԵՀՀ-ն իր նախագծերը կազմելիս հենվելու է Համաժողովի արդյունքների վրա՝ որպես հիմնակազմ նյութի, և առաջարկում է այլ կազմակերպությունների նմանապես վարվել: